

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԷՆ

ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Շաբ. տե'ս «Բազմ.» 1961, ք. 9-10, էջ 192)

ԱՊՈՒՍՈՒԱՐԻ ԱՒԵՐՈՒՄՆԵՐԸ

Աշխարհակալ Տուղրիլ Սուլթանին դորձած աւերումներն ու կողոպուտները հայկական հողի վրայ, ախորժակը զրգռած էր Դուլինի եւ Գանձակի տէր՝ Ապուսուար անուն քիւրտ ամիրային, որ էր, ըստ Լաստիվերտցիին, «փեսայ թաղաւորին հայոց Աշոտոյ»⁴¹:

Շատ ուշ էր, երբ հայերն անդրադարձան թէ Բագրատունի թաղաւորները քաղաքական մեծ սխալ մը գործած էին՝ թոյլ տալով որ Դուլինի եւ Գանձակի պէս հայկական կեդրոնները կառավարուէին մահմեդական ամիրաներէ, որոնք թէեւ երեսանց կը ճանչնային հայ թաղաւորներու գերիշխանութիւնը, բայց ատելութեամբ լեցուած էին քրիստոնեաներու դէմ: Նոյն կարճատես քաղաքականութեան հետեւած էին Բիւզանդական կայսրներն ալ: Անի քաղաքին նենգութեամբ տիրապետելէ վերջ, կրօնական ատելութեամբ լեցուած հայերու դէմ, անոնք մահմեդական ամիրաներ պահելով իշխանութեան ղրուխ, պահեստի ոյժեր կը համարէին զանոնք, օր մը՝ ի հաթիկին՝ Հայերու դէմ լարելու համար մահմեդական բազուկը:

Երբ 1055ին, Տուղրիլ Բէկ Արքայանց ամիրապետութեան ալ տէր դարձաւ, անկէ ետք այլ եւս ամիրաները զիմակնին վար առին: Անոնք թէեւ իրենք զիրենք կայսեր ճորտեր կը նկատէին, բայց հոգւով ու սրտով միացած էին Սուլթան Տու-

ղրիլի հետ, ճանչնալով անոր գերիշխանութիւնը եւ անոր դաշնակից դառնալով:

Երբ Սելճուքներն ոտք դրին հայկական հողին վրայ, Ապուսուարի քիւրտերը՝ կողոպուտի ծարաւի՝ ձեռք ձեռքի տուած էին սելճուք թուրքերուն եւ անոնց հպատակ պարսիկներուն, մեր աշխարհը արիւնով լեցնելով, ամէն ինչ ապականելով, այրելով ու գերելով:

Գաջալերուած Տուղրիլ Բէկի աւերիչ արշաւանքներէն՝ Ապուսուար ամիրան ուղեց անոր կորաքամակ նահանջին վրէժը լուծել: Ան իր զօրին տակ հաւաքեց Սուլթանին բանակէն բաժնուած սելճուքները, մարերը, պարսիկները եւ զանոնք երկու խումբի բաժնեց: Ամիրան 1055ի Մարտ 8ին, խումբով մը յարձակեցաւ Շիրակ գաւառին կողմերը, ուր գործեց ասպատակութիւններ: Այս նոր աղէտին առջեւ շուարած, բազմաթիւ հայեր զիւղերէ ու աւաններէ փախան եւ զիմեցին Անի քաղաքը, հոն ապաւէն գտնելու համար: Սակայն ամէնքը չկրցան ներս մտնել, որովհետեւ զիւղերը վրայ հասեր էր եւ քաղաքին դռները փակուեր էին: Ամիրային ձիաւորները, որոնք փախստականները կը հետապնդէին, մթութեան մէջէն զուրս ելան եւ դռները բռնեցին, եւ ինչպէս կը վկայէ Լաստիվերտցիին, «Սուր ի վերայ եղեալ՝ անհնարին կոտորածս առնէին, որում ոչ գոյր օգնական, զորոց առեալ զառ եւ զգերի գային յաշխարհն իւրեանց»⁴²:

Բիւզանդական արքունիքը, այդ նոր

չարիքին առջեւն առնելու համար, Ապուսուարի դէմ զրկեց արեւելքի բոլոր ոյժերը, որոնց հրամանատարն էր Նիկեիոյ ռոս ներքինին: Ասիկա մտաւ Գանձակ եւ ստիպեց ամիրան՝ որ ճորտութեան դաշինքը կայսրութեան հետ վերանորոգէ եւ իր թուր պատանդ տայ:

Ամիրային երկրորդ գունդը, 1055ի Յունուարին, զիմեց Միրանիս կոչուած լեռան ստորոտը, մարդաշատ եւ ընչաւէտ աւան մը, որ ունէր 30.000 բնակիչ: Եւ որովհետեւ սառնաբեր ցուրտի եղանակն էր, մարդադէմ գաղաններու ձեռքերն ու ոտքերը թմրած էին, որով բան մը չկրցան ընել: Բայց Աստուածայայտնութեան տօնին օրը, կը դրէ Լաստիվերտցիին, երբ այլազգիները զիւր ատեն աւանին մօտեցան, դուրսը զիւղուած խոտերու բազմաթիւ խուրձեր գտան, ու վառելով թէ՛ իրենք տաքցան եւ թէ իրենց ձիերը⁴³:

Բնակիչները տեսնելով հրդեհին բոցը, զարհուրեցան եւ սկսան աղմուկ բարձրացնել: Ահա այդ չիթութեան եւ տաղնապի միջոցին էր որ գաղաններու ջոկերը, կ'ըսէ նոյն պատմագիրը, գէնքերին մերկացնելով, աւանէն ներս մտան, սրիւնուեցան չորս կողմը եւ «սուր ի վերայ եղեալ՝ կոտորեցին առ հասարակ դամենսեան, ոգիս իրբեւ երեսուն հազար, ոչ մնալով ի բնակչաց տեղոյն եւ ոչ մի, բայց թէ ի ճանապարհի ուրեք ոք կայր»⁴⁴: Իսկ անոնք, ինչպէս կ'ըսէ նոյն Լաստիվերտցիին, որոնք նոյն տեղը մնացին, բեռցուցին եղներու, էջերու եւ ձիերու վրայ, որոնց հետ նաեւ ցորենը եւ բոլոր մթերքը, գացին իրենց աշխարհը: Ապա հայկական վիշտերու գուսանը կ'աւելցնէ. «Այլ զբազմադէմ չարիսն՝ զոր նոքա դործեցին, ընդ գրով ո՞վ կարիցէ արկանել. եւ այսպիսի ձեռնարկութեամբ ամայացաւ ի բնակչացն երկիրս ամենայն, ոչ մնալով կենդանի, բայց եթէ յամրոց ուրեք»⁴⁴:

43 Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԲ էջ 79:

Այս դրութեան մէջ էր Հայոց աշխարհը, երբ Բիւզանդական կայսրութեան համար բացուեր էր կրօնական ու քաղաքական չիթութեանց թատերաբեմ մը, որ իր խոր անդրադարձումները պիտի ունենար հայ ազգին ճակատագրին վրայ: Կարեւոր է դնէ համառօտ գիծերու մէջ պատկերացնել այդ պատմական եղելութիւնները, պատճառ՝ Բիւզանդական կայսրութեան տկարացումին:

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Բիւզանդական կայսրութեան տկարանալու պատճառները գլխաւորապէս երեք եղած են. զինուորական, ընկերական եւ գանձային: Այդ տկարութիւնը սկսեր էր այն օրէն՝ երբ պետական թատերաբեմէն անհետացեր էր հայ Արշակունի կայսրը՝ ներս վերջին արու շառաւիղը: Կարեւոր է, սեղմ գիծերով պատկերացնել այդ փառապանծ տան կատարած դործը՝ որ Բիւզանդիոնը հասցուց իր զօրութեան ու փառքի գաղաթնակէտին:

Պատմութեան մէջ հաղուագիւտ դէպք մըն է, որ զիւղացի աղքատ ընտանիքի մը զաւակը, զիտակից միայն իր աղնուական ծագման, բարձրանար կայսերական աթոռը, եւ զայն այնպիսի հաստատուն հիմերու վրայ խարսխէր, որ Արշակունի իր յաջորդները կարենային երկու հարիւր տարի անսովոր վարկ եւ հեղինակութիւն տալ կայսրութեան մը, որ արդէն իսկ կը գտնուէր քաղաքական կրօնական ու տրնտեսական ծանր տաղնապի մը առջեւ, որ եթէ չարունակուէր՝ պիտի քայլեր դէպի իր անկումը:

Բիւզանդիոնի բախտէն, հայազգի կայսրներն ըլլալով զինուորական ու ռազմադէտ մարդիկ, այն խորին համոզումը ունէին, թէ «բանակը պետութեան համար այն է՝ ինչ որ է զուլալ մարմինին համար. եթէ անոր վրայ խնամք չտարուի,

44 Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԲ էջ 79:

41 Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԵ էջ 73:

42 Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԵ էջ 73:

կայսրութիւնը ինքնին վտանգուած է»⁴⁵։ Եւ յիրաւի, այդ կայսրութեան մեծ վեհապետները ոչ միայն կայսերական բանակին ուժեղ ու գիտական կազմակերպութիւն մը տուին, այլ ուշադիր ու յարատեւ հոգ ունեցան զինուորներուն վիճակին վրայ։ Անոնց օրով, կայսերական բանակին գլխաւոր մասը կը կազմէր ազգային տարրը, որու տուած զինուորները զերազանց էին, եւ իրենք զիրենք կը նշկատէին իրենէ ժառանգ հռոմէական հին լեզուներուն, որոնք կերտեր էին աշխարհի մեծագոյն կայսրութիւնը։ Զրաւոր բանակին մէջ ծառայողներուն, հայազգի կայսրը, զինուորական ծառայութեան փոխարէն հողեր կը պարգեւէր, որոնք անօտարանալի, անձեռնմխելի եւ ժառանգական կալուածներ կը դառնային։ Այս պարգեւական կալուածներու տէրերը «ասպետ» տիտղոսը կը կրէին։ Եւ օրէնքը, զինուորապետութիւնն ապահովելու համար, ուշադիր խնամքով այդ կալուածները կը պաշտպանէր, եթէ յափշտակիչներ մէջտեղ ելլէին։

Ազգային բանակը զօրացնելու ուրիշ ազգակ մըն ալ գտեր էին։ Հայազգի կայսրները դրօշին տակ սիրայօժար կ'ընդունէին վարձկան զինուորներ ալ, եթէ անոնց զինուորական ձիրքերը յարմար գատէին, մանաւանդ եթէ հաւոգումը ըլլային անոնց հաւատարմութեան վրայ։ Այս պատճառով է, որ կայսերական բանակին մէջ սկսեցին զինուորապետի խաղաղներ, փեշենէկներ եւ Ռուսեր, Իբերացիներ եւ Սլաւներ, Արաբներ եւ Թուրքեր, Սկանդինաւիոյ Նորմանացիներ եւ Իտալիոյ Նորմանացիներ։ Կայսրը այդ օտարականներէն տարբեր կ'ընդունէր նոյն իսկ իր անձնապահ գունդին մէջ։ «Տասներորդ դարուն, կ'ըսէ բիւզանդագէտ մը, հայկական զօրաբաժինները բազմաթիւ էին կայսերական բանակին մէջ եւ շատ գնահատուած»⁴⁶։ Այդ

օտարականներէն շատերը, մասնաւորապէս Հայերը, Բիւզանդիոնի մէջ փարթամ կեանքի մը հասած, եղան զինուորական վերին հրամանատարներ եւ կամ ստացան զինուորական բարձր աստիճաններ։

Այս գունդերու կողքին, որ կը կազմէր պատերազմի բանակը, կար նաեւ սահմանադրութեան բանակը, որուն յանձնարարութեամբ էր զինուորական սահմանադրութեան փոխարէն՝ կը ստանային հողեր, որոնք ընդհանրապէս կայսերական կալուածի մաս կը կազմէին. այս հողերուն վրայ զինուորները իրենց ընտանիքներով կը հաստատուէին։ Ասոնց պարտականութիւնն էր սահմանադրութեամբ պաշտպանել, զբաւել ամուր տեղեր, զգեակներ եւ միջնաբերդեր. անոնք միանգամայն կը դառնէին ռազմական կարեւոր կէտեր. փակել կիրճերը, հսկել ճամբաներու վրայ, ուշադրութեամբ զիտել՝ ինչ որ թշնամին կը պատրաստէր, ետ մղել արշաւանքը, անոր պատասխանել հակայարձակումով։

Այսպիսի հիմերու վրայ դրուած բանակ մը, պիտի ունենար՝ ի հարկ է՝ պընդակազմութեան և քաջութեան աչքի զարնող ձիրքեր։ Զէնքերու արուեստին քաջալարժ, ամէն փորձի, ամէն յոգնութեան, ամէն զրկում կրելու ընդունակ, այդ բանակը դարձեր էր պատերազմի անգուղական գործիք մը՝ որ միապետութեան փայլուն յաղթանակները ապահովէր։

Տասներորդ դարու հայկազն կայսրները, անվերջ պատերազմի մէջ մահմետական պետութիւններու դէմ, իրենց մղած պատերազմներուն յատկանշական կնիք մը տուին, իրենց զինուորներուն մէջ արծարծելով քրիստոնէական կրօնքի եռանդը։ Ամէն մէկ քրիստոնէայ զինուոր պարտական էր «քալելու այդ սարակինոս ցեղին դէմ, հայհոյող մեր վեհափառ Քրիստոս»

Թաղաւորին։ Այդ զինուորները պարտական էին նպաստել՝ իրենց ձիրքերով՝ անհաւատներու դէմ մղուած պայքարին»⁴⁷։ Այսպէս ինչպէս ճիշտ կերպով զիտել կուտան երկու բիւզանդագէտ պատմիչներ, հայկազուն կայսրները «մեծագոյն գործերը կատարեցին Քրիստոսի դատին համար։ Անոնք բացին Արեւելքի համար, ինչպէս Արեւմուտքի համար, խաչակիրներու թուականը»⁴⁸։ Բանակին հոգն իրենց առաջին պարտականութիւնը համարելով, հայազգի կայսրները մշակեցին իրենց զինուորներուն մէջ, կ'ըսեն նոյն պատմիչները, կրկին զգացումներ. մէկ կողմէ՝ թէ իրենք, զինուորները, սերունդներն են հռոմէական անպարտելի լեզուներուն, միւս կողմէ՝ թէ իրենք կը կուտան, Քրիստոսի պաշտպանութեան ներքեւ, քրիստոնէութեան պաշտպանութեան համար. կայսրները ներշնչեցին իրենց զինուորներուն բիւզանդական հայրենասիրութիւն մը, եւ բարեպաշտ խանդավառութիւն մը, որոնք երկար շրջանի մը համար զանոնք յաղթական ըրին պատերազմի դաշտերուն վրայ»⁴⁹։

Եւ յիրաւի, որչափ ատեն որ բիւզանդական բանակը մնաց բազմաթիւ, ամուր, քաջ, լեցուն եռանդով, խանդավառութեամբ, հայրենասիրութեամբ, նուիրուած իր գործին ու իր կայսեր, որչափ ատեն որ նա առաջնորդուեցաւ ռազմագէտ զօրավարներէ, որոնց մեծ մասը հայազգի էին, գիտցաւ մղել ճարտար պատերազմներ, վարելով զժողովրդին եւ չարքաշ կեանք մը, եղաւ գրեթէ անպարտելի, եւ կայսրութեան մատոյց մեծ ծառայութիւններ»⁵⁰։

Բիւզանդիոնի համար իրական դժբախտութիւն մը եղաւ, երբ հայ Արշակունի փառապանծ տան արու ձիւղը սպառնում, կայսրութեան ճակատագիրը մնաց Կոս-

տանդին Ը.ի երկու պառաւ աղջիկներուն ձեռքը. անոնցմէ մէկը, Զոյէ, երեք անգամ ամուսնացաւ, ոչ թէ բարոյական եւ զինուորական ձիրքերով օժտուած մարդոց հետ, այլ պարզապէս անոնց արտաքին տեսքէն հրապուրուած։ Այսպիսի կայսրներուն հոգը պիտի չըլլար անշուշտ նախկին բանակին ուժեղ կազմը պահել, ընտրել ձեռնհաս ու հմուտ զօրավարներ, պարգեւներով եւ պատիւներով քաջալերել թէ զինուորները եւ թէ զօրավարները, զանոնք բնական նեցուկները դարձնելով ընդարձակածաւալ կայսրութեան մը, որուն դէմ կանգնած էր զինուորական ցեղ մը, Պարսկաստանի Սելճուքեան թուրքերը։ Պալատական մեղկութեան ոգին թափանցեց բանակին մէջ։ Այլեւս բիւզանդացի զինուորները այն կարգապահ ու չարքաշ մարդիկը չէին, այլ պերճանք ու չար սիրողներ, որոնք «փոխան զրահիցն զոր կուռող քաջն հազնէին, նոքա ծոցս եւ զստորոտս եւ ըզթեղանիս բնաւին մեծացուցանէին, և փոխան սաղաւարտիցն զծայր դտակացն սըրացնէին, եւ փոխան արանց պատերազմողաց զկրտերն հոռէին, եւ սկսան ուտել եւ ըմպել»⁵¹։

Հայազգի կայսրները սաստիկ ուժգնութեամբ կուտեր էին աւատական մեծ աղանդականութեան դէմ. այնպէս որ Վասիլ Բ. կը պատմուի թէ այդ ուժեղ դասակարգը ընկճեր էր։ Բայց հակառակ այդ պարտութեան, ԺԱ դարուն այդ աղնուականութիւնը գլուխ բարձրացուցած էր, մանաւանդ ասիական նահանգին մէջ, կոթնելով բանակին վրայ, որ ընկերութեան մէջ առաջնակարգ դիրք գրաւեր էր։ Նա էր, ըստ վկայութեան Փսելլոսի, պետութեան ջիւղը⁵², գիտակից իր ոյժին ու ընկերական կազմին. միւս կողմէ անձուկ կերպով կապուած իր պետին, այդ բա-

47 Անդ, էջ 461։

48 Անդ, էջ 461։

49 Անդ։

50 Հմմտ. անդ, էջ 465։

51 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք. Փարիզ 1859 էջ 74։

52 Psellos, Chronographie, éd. Renauld, p. 4.

45 Charles Diehl - Georges Marçais, Histoire du Moyen Age, tome III, Le Monde O-

riental de 395-1081, Paris, 1944, pg. 463.

46 Անդ, էջ 464։

նակին զինուորական ըմբոստությունը նա-
եւ կայսեր համար մշտնջենաւոր վտանգ
մը ստեղծած էր: Բնական հետեւանք էր որ
քաղաքացի տարրը չկարենար հանդուր-
ժել որ զինուորները տէր եւ տիրական
դառնային կայսրութեան ճակատագրին:
Անոնց ջանքը եղաւ տկարացնել բանակին
ազդեցութիւնը եւ ձեռք անցընել միապե-
տական քաղաքականութիւն մը: Քաղա-
քացիներու եւ զինուորներու միջեւ ծա-
ղած թշնամութիւնը եւ ընդդիմութիւնը
մայրաքաղաքին դէմ՝ պատճառ կ'ըլլայ
որ բանակը քալէ մայրաքաղաքին վրայ,
բռնի ոյժով տապալէ ծերունի կայսրը, որ
համարձակէր էր իրենցմէ դրամական դո-
հողութիւն պահանջել:

Ապստամբութեան առաջնորդ կանգնած
էին երկու յոյն իշխաններ, Կոմիանոս,
ծանօթ Իսահակ Կոմնենոս անունով, որ
թագաւորական աթոռին վրայ աչք տըն-
կած էր, եւ Կոմինաս⁵³: Ապստամբները ի-
րենց տիրապետութեան տակ առին արեւ-
ելեան նահանգները, որոնց բնակիչներէն
սկսան կազմել պատերազմական մեծ
խումբեր. իսկ Միքայէլ Ե. որ չէր ուզեր
սպառնալիքի տակ դահէն հրաժարիլ, ի-
րեն հետ ունէր արեւմտեան նահանգնե-
րը⁵⁴:

Այսպէս, 1057 թուին, յունական աշ-
խարհը երկու մասի բաժնուած՝ քաղաքա-
կան պատերազմով իրարու դէմ կը բա-
խէին, զոհելով երկուստեք բազմաթիւ
կեանքեր:

Երբ մէկ կողմէ քաղաքական պատերազ-
մը տակնուվրայ կ'ընէր յունական աշ-
խարհը, միւս կողմէ Բիւզանդիոնը դար-
ձած էր կրօնական չփոթութիւններու
թատր մը: Շփոթութեան զլուխ կանգնած
էր հռչակաւոր Միքայէլ Կերուլարիոս
Պատրիարքը, որուն վիճակէր էր տխուր
բախտը՝ յունական եկեղեցին տիեզերա-
կան եկեղեցիէն բաժնելու: Սաստիկ ա-
տելութեամբ վառուած Լատիններու դէմ,
այս անգամ ալ զինուեցաւ անոնց ծէսին
դէմ, մանաւանդ բաղարջ հացով պատա-
րազելու սաստիկ արգելք դրաւ: Կ. Պոլ-
սոյ մէջ գտնուած լատինական ազդերուն
բոլոր եկեղեցիները փակել տուաւ, եւ նը-
ղովք կարգաց անոնց վրայ՝ որոնք բա-
ղարջով կը պատարագէն կամ կը հաղոր-
դուին: Ան կը պահանջէր որ լատին եւ
ուրիշ եկեղեցիները ընդունին յունական
տեսակէտը, եւ ոչ թէ լատիններունը:
Յոյները ինչպէս հայոց հետ, այսպէս ա-
մէն եկեղեցիի հետ անհաշտ էին եւ ար-
համարհանքով կը վարուէին: Թէեւ Մո-
նոմախոս կայսրը Լեւոն Թ. Ս. Պապին
հետ միացած՝ ուղեց երկպառակութիւնը
մէջտեղէն վերցնել, եւ վերստին երկու ե-
կեղեցիները իրարու միացնել, ինչպէս էր
հազար տարիներէ ի վեր, սակայն Պա-
տրիարքին խստութեան պատճառով ամէն
ջանք ապարդիւն անցաւ: Միքայէլ Ե. ի օ-
րով Կերուլարիոս Պատրիարքը պատիւնե-
րէ վար առնուեցաւ⁵⁵:

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ
(Շարունակելի)

53 Հմմտ. Ա. Լաստ. Պատմ. Գլ. ԺԸ էջ 80:
54 Հմմտ. Մ. Ուռհ. Պատմ. Բ. էջ 147:

55 Հմմտ. Բարոնիոս, Տեա Զամչեան, Պատմ. Բ.
էջ 961-962:

ՈՒԼԱՇ ԵՒ ԻՐ ՀԱՅ ԱԳԱՐԱԿԱՏԵՐԸ

Ա.

ՈՒԼԱՇ ԳԻՒԴԸ

ՈՒԼԱՇ զիւղը կը գտնուի Սերաստիա-
յէն շուրջ վեց ու կէս ժամ կամ 18 մղոն
հարաւ-արեւմուտք: Այժմ Սըվասի կե-
դրոնական դաղային զիւղերէն մէկն է եւ
պաշտօնական անունն է Ուլաշ Բէոյիւ:
Հ. Ն. Սարգիսեան, որ 1843-1853 տարի-
ներուն Փոքր Ասիա շրջած է, Ուլաշը կը
թուէ Սերաստիոյ զիւղերուն մէջ¹, սա-
կայն ո՛չ Սիմէոն Երեւանցի (Ջամբո), ոչ
Պօղոս Վարդ. Նաթանեան (Տեղեկա-
գիր...) եւ ո՛չ ալ Գարեգին Եպս. Սըր-
ուանձտեանց (Թորոս Աղբար) Ուլաշը յի-
շատակած են Սերաստիոյ առաջնորդական
վիճակին զիւղերուն մէջ: Կ. Պոլսոյ Աղ-
դային Հիւանդանոցին 1904-ի Բնդարձակ
Տարեցոյցին մէջ ալ զիւղը յիշուած չէ ոչ
մէկ առաջնորդական թեմի մէջ, թէեւ ա-
մենայն հաւանականութեամբ կը վերաբե-
րէր Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին:
Գիւղը հաստատուած է գաշտավայրի
մը մէջ եւ լիճի մը մօտ, 4770 ոտք բար-

ձրութեան վրայ²: Հողը շատ արգասաբեր
էր, եւ ցորենը մէկի փոխարէն 10-12 բերք
կու տար: Ինչպէս Սերաստիոյ Դղմաճ
զիւղը, Ուլաշն ալ կ'արտադրէր ծերուն
կոչուած ընտրելագոյն ցորենը: Այս եր-
կու զիւղերէն է որ Սերաստիա կու դար
ճերմակ ալիւրը: Գոմէշի կաթէն պա-
տրաստուած սերը եւ մածուկը ընտիր էին:
Դաշտին մէջ կը գտնուէր փոս մը, ուր
ձմեռը մէկ կամ երկու ոտք ջուր կը հա-
ւաքուէր, բայց ամառը կը ցամքէր: Ու-
լաշ հայկական հարուստ զիւղ մըն էր³:
Գիւղին մօտ կը գտնուի Թեճիւր անտա-
ռապատ լեռը, որուն ստորոտը կը բնա-
կէին Գոչքիւրի եւ Չաղա Գիւրտեր: Քուր-
մաճի լեռը հարաւէն կը փակէ գաշտա-
վայրը⁴:

Հ. Հ. Ֆոն տեն Օսթըն Ուլաշի մօտերը
գտած է ուշագրաւ թրքական չիրիմ մը:
Չանդուածեղ քարին վրայ քանդակուած
են դանդաղ առարկաներու պատկերներ:
Գլուխին եւ ոտքերուն վրայ բարձրացող
կոթողները մարդկային դէմքի մը նմա-
նութիւնը ունին⁵:

Կարապետ Գարիկեան «Ուլաշ եւ շրջա-

1 Köylerimiz, p. 741. - Ուլաշ անուն զիւղեր
կան Անգարայի Քեսքին, Մուղլայի Միլաս,
Սամսունի Չարչամպա, Տիարպաքրի Օսմանիյէ
գաղաներուն մէջ: Կան նաեւ երկու Ուլաշ-
լար, մէկը Պոլսի Կերեմէ եւ միւսը Քէօթա-
հայի Էմեթ գաղային մէջ, եւ Ուլաշ պալա
եւ Ուլաշ զիր Գոճաէլիի Գարամուրաթ գաղա-
յին մէջ: (Անդ, էջ 741-742):

2 Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս.
1864, էջ 65:

3 Wilson, Handbook for Travellers in Asia
Minor, etc. 1895, p. 260.

4 Idem, ibid.

5 Ինճիճեան, Ասիա, Ա, էջ 367, Բարունակ պէյ
Ֆէրուհիան, Ուղեւորութիւն ի Բաբելոն ընդ
Հայաստան. 1878, էջ 35: H. H. von der
Osten, Explorations in Hittite Asia Mi-
nor, 1927-1928 (The University of Chicago
Press), p. 63; James Brant, « Journey
through a part of Armenia and Asia Mi-
nor in the Year 1835 ». (JRGs, VI (1836)
mp. 214.

6 H. H. von den Osten, ibid. Photo: p. 64.
Բիւզանդական եւ մահմեդական չիրիմներու
նմանութեան մասին՝ Tout le monde fut
frappé de la ressemblance que les tombes